



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 31.05.16 թ.

Ելք № 027

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հարկային մարմնի կողմից իրականացվող՝ հարկերի հաշվարկման և վճարման հետ կապված առկա ռիսկերի վերաբերյալ վերլուծությունների որակի բարձրացման նկատառումներով կից ներկայացվում է հարկային մարմնի կողմից վերջին օրերին հարկ վճարողներին ուղարկված՝ հարկերի հաշվարկման և վճարման հետ կապված առկա ռիսկերի վերաբերյալ ծանուցագրերի կապակցությամբ սոցիալական ցանցում արտահայտված կարծիքների և արված մեկնաբանությունների քաղվածքը (էթիկայից ելնելով որոշ բառեր ներկայացված չեն կամ փոփոխվել են):

Կարծում ենք ներկայացված կարծիքները և արված մեկնաբանությունները կարող են կողմնորոշել հետագայում վերլուծությունների արդյունավետության բարձրացման և դրա արդյունքում հարկ վճարողներին ուղղվող ծանուցումների բովանդակության փոփոխման հարցում:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան

Քաղվածք սոցիալական ցանցից

Հարկային մարմնի կողմից վերջին օրերին հարկ վճարողներին ուղարկված՝ հարկերի հաշվարկման և վճարման հետ կապված առկա ռիսկերի վերաբերյալ ծանուցագրերի, արձանագրությունների կապակցությամբ արտահայտված կարծիքների և արված մեկնաբանությունների

«Կամերալ»-ներին մեկ հատ բացատրություն-պարզաբանում չկազմի: Ո՞նց շարադրես ու խմբագրես, որպեսզի ցույց տաս, որ՝ 1) կռահել ես, թե ինչ են ցանկացել ասել, սակայն՝ 2) ամբողջովին չեն վերլուծել, 3) սխալ եզրահանգում են արել, որովհետև իրենց տեղեկատվական բազան դեռևս շատ թերի է, 4) էդ ...վերլուծություններ կատարողները երբեք ինքնուրույն որևէ հաշվետվություն չեն կազմել (տպավորությունն այսպիսին է), 5) մեր երկրում բիզնես միջավայրը աղետի մեջ է, և տրամաբանական է նաև վնասով աշխատելը, 6) կան դեպքեր, երբ մարդիկ աշխատում են նաև նվազագույն աշխատավարձից էլ ցածր վաստակով, 7) նման պայմաններում այսպիսի կիսատ-պռատ գրությունների տակ ստորագրություն դնելը վիրավորական է հենց ստորագրողի համար, 8) պետք է վերջ տալ նման և պայքարել կաշառակերության դեմ:

Եթե ՊԵԿ-ում մտածում են միայն պլան կատարելու մասին և միևնույն է համակարգի հեղինակությունը, ուրեմն ծանուցումները դեռ կշարունակվեն: Ափսոս, կարող էր և լավ լինել: